

3519

281.6

U-23

1913

2010

2001

Ծ Ր Ա Պ Ի Ր
Կ Ա Ն Ո Ն Ա Ք Ր Ի

ԱԶԳ. ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻ ՊԱՇՏՈՆԵՈՒԹԵԱՆ

Մ Ա Տ Ո Ւ Ց Ե Ա Ն

Printed in Turkey

Ա Պ

ԱԶԳԱՅԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎՆ

Ի 20 ՄԱՐՏ 1913



Կ. ՊՈԼԻՍ

Տպագր. Ռ. ՍՍ.ԴԱՆԱՆ

281.6
Ա. 23

1643

281.6
Ա. 23

Այ

5

Ծ Ր Ա Գ Ի Ր

Printed in Turkey

Կ Ա Ն Ո Ն Ա Գ Ր Ի

ԱԶԳ. ՊԱՏՐԻԱՐԻԱՐԱՆԻ ՊԱՇՏՈՆԵՌԻԹԵԱՆ

Մ Ա Տ Ո Ւ Յ Ե Ա Լ

Ա Ռ

ԱԶԳԱՅԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎՆ

Ի 20 ՄԱՐՏ 1913



Կ. ՊՈԼԻՍ

Տպագր. Ռ. ՍԱԳԱՆԵԱՆ



23/38

ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆ ՀԱՅՈՑ

ԴԻԻԱՆ ԽԱՌՆ ԺՈՂՈՎՈՑ

ԱԶԳ. ԿԵԴՐ. ՎԱՐՁՈՒԹԵԱՆ

Համար 213

Կ. Պոլիս 20 Մարտ 1913

Վսեմաճում Ասեմապէս Էփենի

Ազգային Երեսփոխանական Ընդհանուր Ժողովոյ,

Ազգային Կեդր. Վարչութիւնս կրր պաշտօնի ձեռնարկեց, իր նախորդէն փոխան-
ցուած գտաւ Ազգային Պատրիարքարանի պաշտօնէութեան կանոնադրի ծրագիր մը, որ
մասամբ քննուած և ընդունուած էր:

Որովհետեւ սոյն ծրագիրը պատրաստուած էր ժամանակիս ոգւոյն ու պահանջմանց հա-
մաձայն՝ Պատրիարքարանի գործառնութիւնները կանոնաւոր ուղղութեան մը վերածելու
նպատակաւ, և քննութիւնը կատարելագործուած չէր, ուստի Ազգային Կեդր. Վարչու-
թեան Խառն Ժողովս պարա անձին համարեց այդ ծրագիրն իր ամբողջութեամբն ուսում-
նասիրութեան առարկայ ընել, և պարբերաբար մէկ քանի նիստերու մէջ վերստին քնն-
նելով զայն, ինչ ինչ բարեփոխումներով, յաւելումներով ու յապաւումներով աւարտեց
այդ աշխատութիւնը, և որոշեց սպազորել ծրագիրը և մատուցանել, ինչպէս որ փափա-
քած էր Պատկառելի Ժողովը:

Արդ, սպազորութեան զործն ևս աւարտած ըլլալով, ընդ գրոյս կը մատուցանենք այս
անգամ նոյն կանոնադրի ծրագրէն թաղմաթիւ օրինակներ խնդրելով որ ստիպողաբար նկա-
տողութեան առնուին անմիջապէս:

Բաց աստի, Խառն Ժողովս նկատելով որ կանոնադրի գործադրութիւնն անմիջական
հանգամանք ունի, միւս կողմէ նկատելով որ անոր Պատկառելի Ժողովէդ վաւերանալը ժա-
մանակի կը կարօտի, մինչ Պատրիարքարանի վերականգնութեան խնդիրը թողլաւու չէ յա-
պաղումներու, հետև արար կը խնդրէ որ Ազգային Ժողովը հաճի արտօնել կանոնադրի
առժամեայ գործադրութիւնը, մինչև որ Ժողովոյ քննութեամբ և վաւերացմամբ յաւա-
քիկային ստանայ իր վերջնական հանգամանքը:

Մնա՛մք խորին յարգանքով

Դիւան Ազգ. Կեդր. Վարչ. Կօն. Ժողովոյ

Ասեմադպիր

Ասեմապետ

Գ. Մ. Վ. ՊԱՆԱՔԵԱՆ, ԵՂԻՇԷ ԱՐՔԵՊՍ. ԴՈՒՐԵԱՆ

Դիւան Ազգ. Կեդր. Վարչ. Քաղ. Ժողովոյ

Դեր-Ասեմադպիր

Ասեմապետ

Ա. ԳԱՍՊԱՐԵԱՆ

Ս. ԳԱՐԱԵԱՆ



2644
39

ԱԶԳԱՅԻՆ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Նախագահ՝ Տ. ՅՈՎՀԱՆՆԷՍ Ս. ԱՐԲԵՊԻՍԿՈՍՍ ԱՐՇԱԲՈՒՆԻ (Պատրիարք)

ԱՆԴԱՄՔ ԿՐՕՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՅ

Տ.	Եղիշէ	Ս.	Արքեպս.	Դուրեան	Ատենապետ
»	Դրիգորիս	»	»	Յովհաննէսեան	Դեր-Ատենապետ
»	Գաբրիէլ	»	Եպս.	Ճէվաճիրճեան	
»	Վահան	Ծ.	Վրդպտ.	Յակոբեան	
»	Եղնիկ	»	»	Պատանեան	
»	Սմբատ	»	»	Գաղաղեան	
»	Դրիգորիս	»	»	Պալաքեան	Ատենապետ
»	Սահակ	»	Քհնյ.	Պետրոսեան	
»	Յակոբ	»	»	Տէրէճէկեան	
»	Վահրամ	»	»	Յակոբեան	
»	Վարդան	»	»	Դերձակեան	
»	Եղիազար	»	»	Պօղոսեան	
»	Դրիգոր	»	»	Ճէպէճեան	
»	Արքանամ	»	»	Էպէեան	Դեր-Ատենապետ

ԱՆԴԱՄՔ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՅ

Արքանամ	Էֆ.	Տէր	Յակոբեան	Դեր-Ատենապետ
Արխատակէս	»	Դատարեան	»	Ատենապետ
Տօքթ.	Դրիգոր	»	Ճէլալեան	
	Լեւոն	»	Տէմիրճիպաշեան	
Տօքթ.	Կարապետ	»	Փաշալեան	
	Համբարձում	»	Պօյաճեան	
	Յարութիւն	»	Չէքի	
	Ոսկան	»	Մարտիկեան	
	Սարգիս	»	Սուրբ	
	Սմբատ	»	Բեաթիպեան	
	Ստեփան	»	Դարանեան	Ատենապետ
Տօքթ.	Ստեփան	»	Թէրզեան	
	Վահան	»	Փափաղեան	
	Տիրան	»	Երկանեան	Ատենապետ

ԾՐԱԳԻՐ ԿԱՆՈՆԱԳՐԻ

ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏՐԻԱՐԺԱՐԱՆԻ ՊԱՇՏՈՆԵՈՒԹԵԱՆ

ՅԱՌԱՋԱԲԱՆ

ԳԼՈՒԽ Բ.

Խորհրդակցութիւն

Յօդ. 1.— Ազգային Պատրիարքարանն՝ ըստ Ազգ. Սահմանադրութեան հիմնական սկզբանց (Յօդ. Դ.) Թուրքիոյ Հայոց Կրօնական և Ազգային, Վարչական, Յարաբերական Կրթական ու Երեսփոխական գործոց վերին տեսչութեան կեդրոնն է:

Յօդ. 2.— Ս. Պատրիարքն (Սահմ. Յօդ. 1.) Ազգ. գործադիր իշխանութեան պետն, և Պատրիարքարանի ամէն գործառնութեանց վերին պատասխանատունն է:

Յօդ. 3.— Ազգ. Պատրիարքարանն ունի հետևեալ վարչական բաժանումները.

- Ա. Փոխանորդարան
- Բ. Խորհրդակցութիւն
- Գ. Դիւան
- Դ. Սպասարկութիւն

ԳԼՈՒԽ Ա.

Փոխանորդարան

Յօդ. 4.— Ազգ. Պատրիարքարանի փոխանորդարանը կ'զբաղի Մայրաքաղաքի թաղային ընթացիկ այն ամէն գործերով, որոնք կը չլուին ի փոխանորդարան կտրգադրութեան համար:

Փոխանորդարանի մէջ կը կատարուին նշանակաւորութեան պաշտօնական ձեռնարկութիւնները, և կը արուին ամուսնական հրամաններ և վկայականներ, ինչպէս նաև կը անօրինուին գաւառափոխութեան խնդիրներ, և ամուսնալուծման վճարի գործադրութիւնը: Այս գործողութեանց համար Պատրիարքական Փոխանորդն իր արամազրութեան ներքեւ ունի քահանայ մը: Պատրիարքական Փոխանորդը կը նախագահէ Դատաստանական Խորհրդոյ, և ի ղեկաց Ս. Պատրիարքին ու անոր քահանաարութեամբ պաշտօնական այցելութիւններ կուտայ ուր որ հարկ ըլլայ, և ի բացակայութեան Ս. Պատրիարքի՝ այցելութիւններ կ'ընդունի: Փոխանորդարանը յատուկ Դիւան մ'ունի:

Յօդ. 5.— Ազգ. Պատրիարքարանն ունի խորհրդական մը, որ պատասխանատու է Պատրիարքարանի գործառնութեանց, և միանգամայն վերին հսկող ըլլալով իր անատանց:

Խորհրդականը պէտք է ըլլայ վկայաւորէնազէտ, և քահանայ Հայերէնի, Թուրքերէնի և Ֆրանսերէնի:

Խորհրդականը՝ 1. Կը բանայ թղթակցութիւնները, անխախտ աշօրհայ գրերը և Ս. Պատրիարք Հօր մակագրութեամբ կը յանձնէ պատկանեալ ժողովոց, խորհրդոց կամ զիւսնատանց առ ի անօրէնութիւն: 2. Կ'ուսումնասիրէ իրեն յանձնարարուած խնդիրները, իրենց նախընթացով և ամրագրական թղթածրարը իր տեղեկագրով մէկտեղ կը ներկայացնէ Ս. Պատրիարքին:

Նոյնպէս հետապնդելով ժողովոց ու խորհրդոց որոշմանց անխախտ գործադրութիւնը, այս մասին շարունակ տեղեկութիւն կուտայ Ս. Պատրիարքին և Վարչութեան:

3. Խորհրդականը՝ ի հարկին կը կատարէ նաև Պատրիարքարանի կողմէ Բ. Դրան և ուրիշ պաշտօնատանց մօտ ըլլալիք կարեւոր զիմումներու վերաբերեալ բերանալի բանակցութիւնները, յարաբերական գործոց ընթացիկ և ելից մասին միշտ տեղեկութիւն տալով Ս. Պատրիարքին և Վարչութեան:

Խորհրդականը՝ ի հարկին կ'ընկերանայ Ս. Պատրիարքին պաշտօնական այցելութեանցը:

ԳԼՈՒԽ Գ.

Յօդ. 6.— 1. Ազգ. Պատրիարքարանը պիտի ունենայ գործակաւար մը, որուն պաշտօնն է՝ կառավարական պաշտօնատանց մօտ հետապնդել յարաբերական գործերը, և ի հարկին ընկերանալ Ս. Պատրիարքին այցելութեանց: 2. Գործակաւարն ևս պէտք է ըլլայ օրէնազէտ և հմուտ Հայերէնի, Թուրքերէնի և Ֆրանսերէն լեզուաց, կ'օգնէ խորհրդ-

գականին, և կը գործէ անոր պատասխանա-
տուութեան տակ ու հրահանգաց համաձայն:

ԳԼՈՒԽ Դ.

Դ ի ռ ա ն

Յօդ. 7. — Պատրիարքարանի գիւանները
թուով ութ են:

- Ա. Ազգ. Ընդհանուր Ժողովոյ Դիւան
- Բ. Կրօնական Դիւան
- Գ. Վարչական Դիւան
- Դ. Յարաբերական Դիւան
- Ե. Երեւմտական Դիւան
- Զ. Ազգահամարի և Վիճակագրութեան Դիւան

- Է. Արձանագրութեան Դիւան
- Ը. Սուսնդից և Յանձնարարութեանց Դիւան

Ա. Ազգ. Ընդհանուր Ժողովոյ Դիւան

Յօդ. 8. — Ազգ. Ընդհ. Ժողովն ունի ի
րեն յատուկ Դիւան մը, որուն պաշտօնն է՝
ժողովոյ վերաբերեալ գրութիւնները պատ-
րաստել, գրութեանց հսկողութիւնը կատա-
րել, ատենագրութիւնները պատրաստել և
տպագրութեան հսկել, օժանդակ նախաքն-
նիչ դիւաններուն արձանագրութիւնը ինչպէս
նաեւ խորհրդարանական յանձնաժողովոյ
քարտուղարութիւնը կատարել: Ընդ հսկո-
ղութեամբ Դիւանապետին՝ սոյն Դիւանը
կը վարէ զիւանադպիր մը, որ միայն Ազգ.
Ժողովոյ գումարուած օրերը, օգնական մ'ալ
կ'ունենայ իրեն հետ, նօթագրութեան համար:

Բ. Կրօնական Դիւան

Յօդ. 9. — Կրօնական Դիւանը կը կատարէ
Կրօնական Ժողովոյ տաճարագրութիւնները,
արձանագրութիւնները, թղթակցութիւնները
և կոնդակներու խմբագրութիւնը:

Դ. Վարչական Դիւան

Յօդ. 10. — Վարչական Դիւանը կը կա-
տարէ Ռաւն և Գաղաքական Ժողովոյ, Ու-
սումնական, Դատաստանական և Վանօրէից
Խորհրդոց և Կառկաց Հոգարարութեան
ատենագրութիւնները, արձանագրութիւննե-
րը, հայերէն թղթակցութիւնները և այս ժո-
ղովոց ու խորհրդոց յատուկ ամէն գործառ-
նութիւնները:

Կ. Պոլսոյ Կրթական Ընդհանուր Տեսուչը՝
որուն պաշտօնն և իրաւասութիւնները նա-
խատեսուած են 1893ի Ազգ. Նախնական Կրթ-
թութեան Կազմական Կանոնադրին 42րդ.
յօդուածով, կը պաշտօնավարէ իրիւ կցորդ
պաշտօնեայ Վարչական Դիւանին:

Դ. Յարաբերական Դիւան

Յօդ. 11. — Յարաբերական Դիւանի մի-
ջոցաւ կը կատարուին Պատրիարքարանի Պե-
տութեան հետ ունեցած յարաբերական կամ
օրինական գործառնութիւնք, և պետական
և այլ պաշտօնատանց հետ Թուրքերէն և Թը-
րաններէն լեզուով թղթակցութիւնք:

Այս դիւանին պարտականութիւնն է նաեւ
կատարել հպատակութեան, ժառանգական և
վերջապէս օրինական հանգամանք ունեցող
բոլոր խնդիրներու վերաբերեալ գործառնու-
թիւնները՝ Ազգ. Կեդր. Վարչութեան որոշ-
մամբ և կամ Ս. Պատրիարք Հօր հրամանաւ:

Ե. Երեւմտական Դիւան

Յօդ. 12. — Երեւմտական Դիւանին պար-
տականութիւնն է՝

1. Ազգ. Կեդր. Մատուկին պիւտձէի
ծրագիրը պատրաստելով, յանձնել Տեսուչ.
Խորհրդոյ, և Ազգ. Ընդհանուր Ժողովոյ վա-
ւերացումը տապալելէ վերջ գործադրութեա-
նը հոգ տանիլ:

2. Կեդր. Ստուկին ամէն կարգի հա-
տոյթներու գանձումն ու ծախուց վճարումը:

3. Ազգ. Տրոց վերաբերեալ ամէն գոր-
ծառնութեանց կատարումը:

4. Պատրիարքարանի մատակարարու-
թեան հոգը, և պէտք եղած բոլոր իրեղէն-
ներու նուազութիւնը գնումը:

5. Պատրիարքարանի դրամական գոր-
ծառնութեանց կանոնաւոր հաշուաւարու-
թիւնը:

6. Թաղական Խորհրդոյ, Ազգ. հա-
տատութեանց, նպատաստաւոր յանձնաժո-
ղութեան և առ հասարակ բոլոր մատակա-
րար մարմիններու դրամական գործառնու-
թեանց հսկակցութիւնը:

7. Տեսուչական Խորհրդոյ և Երեւմտաց
Հոգարարութեան յանձնարարութիւնները,
արձանագրութիւնները, ատենագրութիւն-
ները, և թղթակցութիւնները կատարել:

Զ. Ազգահամարի և Վիճակագրութեան Դիւան

Յօդ. 13. — Ազգահամարի Դիւանին
պարտականութիւնն է՝

1. Մայրաքաղաքի և Գաւառաց ազ-
գապատեան կալուածաց և չարժական ու ան-
չարժ գոյից վիճակագրութիւնն և ուրոյն
տոմարներու մէջ արձանագրութիւնը:

2. Մայրաքաղաքի և Գաւառարանակ
ազգայիններու մարդահամարն ու վիճակա-
գրութիւնը (ծնունդ, ամուսնութիւն և մահ):

3. Վանքերու, եկեղեցիներու և գրա-
րոցներու վիճակագրութիւնն:

4. Կարուածական առ ու ծախի և այլ
ամէն կարգի գործառնութիւնք:

5. Ազգային՝ այն է՝ միւսքեան վազմ-
ներու առ ու ծախ, որ կը կատարուի քաղ-
րիւի Յանձնաժողովոյ մը առջեւ, ընդ նա-
խադասութեամբ Ս. Պատրիարքին:

Ասոյն Յանձնաժողովոյ անդամներն են՝
Պատրիարքարանի խորհրդականը, Վարչա-
կան և Յարաբերական դիւաններու պետերը
և Ազգահամարի ու Վիճակագրութեան դի-
ւանի Տեսուչը, որոնք կ'ըրաւին նաեւ յա-
շարակից ինքիզալի և մահիլիլի գործողու-
թեամբ:

Է. Արձանագրութեան Դիւան

Յօդ. 14. — Արձանագրութեան Դիւանի
պարտականութիւնն է՝

1. Պատրիարքարանի ընդունած և զըր-
կած ամէն տեսակ պաշտօնագրերու, նա-

մակներու, թղթերու, ծրարներու կանոնա-
ւոր արձանագրութիւնը, և սոյն գրութեանց
ու ծրարներու մակագրութեանց համաձայն
անյապաղ յղումը պատկանեալ ժողովներու,
Տեսուչ խորհուրդներու և դիւաններու:

2. Վերոյիշեալ պաշտօնագրերու գաղա-
ւորութիւնը, և անոնց անթերի պահպանումը:

3. Պարտութեաներու կանոնաւոր կազ-
մութիւնը:

4. Հսկել ամէն տեսակ թղթակցու-
թեանց անյապաղ առաքման:

5. Աւանդ Ս. Պատրիարքին կամ խոր-
հրդականին գրաւոր արտօնութեան, և
առանց ստացալի ոչ մէկ թուղթ կամ
պատճէն յանձնել սեւէ մէկին:

Ը. Աւանդից և Յանձնարարութեանց Դիւան

Յօդ. 15. — Այս Դիւանին պարտակա-
նութիւնն է՝

1. Արձանագրել Պատրիարքարան հա-
սած այն դրամներն՝ որոնք Կեդր. Մատու-
կի սովորական հատոյթներու կարգէն չեն,
օրն օրին գանձք չլել տալ հարկ եղած տե-
ղերը, կամ յատկացնել սահմանեալ նպա-
տակին:

2. Բռնել ամէն նպատաստաւոր ու մա-
տակարար մարմիններու և յանձնաժողովնե-
րու անչարժ ու չարժական գոյից ամբողջա-
կան տուժարը, և ըստ այսմ գանձել տալ
Պատրիարքարանի պաշտօնական հաւաքին
ձեւքով անոնց հատոյթներն ու եկամուտ-
ները:

3. Բոլոր յիշեալ գանձումները օրն օրին
պիտի արձանագրուին մասնաւոր տետրակ-
ներու մէջ, և պիտի փոխադրուին մէն մի
մարմնոյն կամ մատակարարութեան անուան
բացումը հաշիւներուն մէջ:

4. Վերոյիշեալ յանձնաժողովներու և
այլ կառակատար մարմիններու հաշուոյն
ըլլալիք բաշխումները և բոլոր վճարումները
պէտք է կատարուին յանձնաժողովներու ու-
րոշման և պատասխանատու մարմնոց կողմէ
տրուած հրամաններու համաձայն:

5. Կատարել բոլոր կազմուած և կազ-
մուելիք մատակարար այս կարգի յանձնա-
ժողովներու և մարմիններու քարտուղարու-
թիւնն ու համարակալութիւնը:

Ամէն ամսոյ վերջը այս Դիւանին համա-
րակալն պիտի պատրաստէ մէն մի յանձնա-
ժողովի նիւթական կայսթիւնը պատկերա-
ցընող ցուցակներ, ինչպէս նաեւ հասած ու
զրկուած աւանդերու մէկ ցանկը, որուն օ-
րինակը պէտք է ներկայացնէ պատկանեալ
մարմնին, և երկրորդ օրինակն ևս Տնտե-
սական Խորհրդոյ. իսկ առնադրութեանց
մէկ պատճէնը Ս. Պատրիարքին:

Այս դիւանին գործառնութիւնը պիտի
գտնուին նախ մէն մի մարմնոյ և Յանձնա-
ժողովի անդամոց հակակշիւն, և յետոյ Պատ-
րիարքարանի Երմտական Տեսչին ու Տնտե-
սական Խորհրդոյ անմիջական վերին հսկա-
լութեան ներքեւ:

Այս դիւանը երբեք սնտուկ չպիտի ու-
նենայ, այլ իր գրամական բոլոր գործառ-
նութիւնը պիտի կատարուին ուղղակի Պատ-
րիարքարանի սնտուկին միջոցաւ:

Դիւանական ժողով

Յօդ. 16. — Շարաթը մէկ անգամ կամ ա-
ւելի պէտք է դիւանապետները և Տեսուչ-
ները ժողով գումարեն Պատրիարքարանի
մէջ խորհրդականին նախագահութեամբ:

ԳԼՈՒԽ Զ.

Պաշտօնից Թոշակներ

Յօդ. 19. — Ս. Պատրիարք Հայրը կը ստանայ (5500) հինգ հազար հինգ հարիւր
դահեկան ամսաթոշակ, և Պատրիարքարանի պաշտօնէութիւնը կ'ստանայ հետեւեալ
ամսաթոշակները:

	Նորագոյն	Առաւելագոյն	Դեկէ.
Պատրիարք. Փոխանորդ	—	1500	»
Կրօնական դիւանադպիր վարդ.	—	600	»
Կրօնական դիւանի քարտուղար քննչ.	—	500	»
Փոխանորդարանի	—	500	»
Պատրիարքարանի խորհրդական	3000	4000	»
Գործակաւար	1200	2000	»
Դիւանապետ	1750	2500	»
Կրթական ընդհ. տեսուչ	1500	2000	»
Տեսուչ	1200	1700	»
Դիւանադպիր խառն եւ Գաղ. ժողովոց	1200	1700	»
Դիւանադպիր Ազգ. Ընդհ. ժողովոյ	1000	1500	»
Համարակալ	1000	1500	»
Արկղակալ	800	1200	»
Քարտուղար	700	1000	»
Օգնական-քարտուղար	400	600	»
Քարապանապետ	—	600	»
Քարապան	400	500	»
Սենեկապան	—	400	»
Դռնապան	—	400	»

Այս ժողովը պիտի ուսումնասիրէ դիւանա-
կան խնդիրները և ներքին կազմակերպու-
թեան և կարգապահական հարցերը, և բա-
ցարարական տեղեկագրով զանոնք պի-
տի ներկայացնէ պատկանեալ մարմիններուն
Պատրիարք Հօր միջոցաւ:

ԳԼՈՒԽ Ե.

Ապաստարարութիւն

Յօդ. 17. — Անեկապաւններու պարտա-
կանութիւնն է՝ հող տանիլ Պատրիարքա-
րանի ներքին մաքրութեան, և կատարել
դիւաններու սպասարկութիւնը:

Յօդ. 18. — Բարապաններու պարտա-
կանութիւնն է՝ թղթակցութիւնները տանիլ
ու բերել, ժողովոց ու խորհրդոց հրաւիրա-
գրերը ցրուել, Դատաստանական Խորհրդոյ
կոչնագիրները պատկանելոց յանձնել ի հար-
կին գրամական գանձումներ ընել, և իրենց
տրուելիք հրահանգներուն համաձայն Պատ-
րիարքարանի ազանովութեան հող տանիլ
ու արտաքին սպասարկութիւնը կատարել,
ի կիր առնելով կոչնագրի ու կարեւոր գրու-
թեանց համար ընկալագրի դրութիւնը:

ԳԼՈՒԽ Է.

Պաշտօնից Անուանում

— Ա. Պաշտօնականներ —

Յօդ. 20. — Օգնական-քարտուղարները
կ'ընտրուին մրցումով երկրորդական վարժա-
բաններու չրջանաւարտներու մէջէն, որոնք
պէտք է գոհացուցիչ հմտութիւն ունենան
հայերէն, ֆրանսերէն և թուրքերէն լեզ-
ուաց:

Յօդ. 21. — Մրցմանց մասնակցիլ փա-
փաքողները պէտք է խնդրագրով մը ներ-
կայանան ի Պատրիարքարան իրենց խնդրա-
գրին կցելով ծննդեան, ուսման, բարի վա-
րուց, բարւոք պաշտօնավարութեան (եթէ
այլուք պաշտօնավարած են), և բժշկական
վկայականները:

Յօդ. 22. — Մրցման ներկայացուցիչները
պէտք է ստանալ 18 տարեկան և առ ա-
ռաւել 30 տարեկան ըլլան:

Յօդ. 23. — Մրցումը կը կատարուի գրա-
ւոր կերպով Յանձնաժողովի մը կողմէ՝ զոր
կ'ընտրէ Քաղաքական ժողովը: Մրցման
արդիւնքը տեղեկագրով մը կը ներկայացուի
նոյն ժողովին՝ որ կը կատարէ վերջնական
ընտրութիւնը:

Յօդ. 24. — Օգնական-քարտուղարները
կ'ստանան 400 դ՛կ. սկզբնական ամսական,
երկու տարին անգամ մը 100 դահեկան յա-
ւելած կ'ընդունին, մինչև որ ստանան իրենց
յատկացեալ 600 դահեկանի բարձրագոյն ամ-
սականը:

Յօդ. 25. — Քարտուղարները կ'ընտրուին
անպատճառ օգնական-քարտուղարներու ար-
ժանաւորագոյններու մէջէն, և կ'ընդունին
700 դահեկան ամսաթոշակ: Ամէն երկու տա-
րին անգամ մը 150 դահեկանի յաւելման
իրաւունք ունին, մինչև որ իրենց յատկաց-
եալ 1000 դահեկանի բարձրագոյն ամսա-
թոշակը ստանան:

Յօդ. 26. — Դիւանադպիրներն անպատ-
ճառ կ'ընտրուին քարտուղարներու մէջէն
մրցմամբ: Առնաք կը վարեն Խառն և Քա-
ղաքական ժողովոց դիւանադպրութիւնը, և
կ'ընդունին 1200 դահեկան ամսաթոշակ:
Երեք տարին անգամ մը 250 դահեկան յա-
ւելումով, վեց տարի վերջ կ'ընտանան իւ-

րենց յատկացեալ 1700 դահեկանի բարձրա-
գոյն ամսաթոշակը:

Յօդ. 27. — Համարակալները և արկղակալը
կ'ընտրուին մրցումով օգնական-քարտուղար-
ներու մէջէն, և եթէ կարելի չըլլայ օգնական
քարտուղարներու մէջէն բնարկը համա-
րակալները, այն առնն զուրաւն համա-
րակալութեան համար պէտք է կամ հմտու-
թիւնն ունեցող անձեր կ'ընտրուին մրցմամբ:
Համարակալներու համար եղած մրցումը կը
կատարուի կանոնադրիս 20, 21, 22 և 23րդ
յօդուածներու համաձայն:

Յօդ. 28. — Համարակալները կ'ընդունին
1000 դահեկան ամսաթոշակ, և իրաւունք
ունին ամէն երկու տարին անգամ մը 250
դահեկանի յաւելման, մինչև որ ստանան
իրենց յատկացեալ բարձրագոյն ամսականը՝
որ է 1500 դահեկան:

Յօդ. 29. — Տեսուչները կ'ընտրուին
փորձառու և կարող դիւանադպիրներու մէ-
ջէն: Տեսուչները թուով չորս են՝ Ա. Երեւ-
մանց դիւանի պետ, Բ. Ազգահամարի դի-
ւանին պետ, Գ. Աւանդից և Յանձնարարու-
թեանց դիւանի պետ, և Դ. Արձանագրա-
րութեան դիւանի պետ:

Տեսուչները կ'ընդունին 1200 դահեկան
ամսաթոշակ, և ամէն մէկ երեք տարի 250
դահեկանի յաւելում մը մինչև որ ստանան
1700 դահեկանի բարձրագոյն ամսաթոշակը:

Երմտական Դիւանի Տեսուչը պէտք է ըլ-
լայ հմուտ տմարակալութեան, և իր պար-
տականութիւններն են՝ 1. Հսկել կեղք. սնն-
սակի ամէն գործառնութեանց, 2. Պիւտ-
ճէի ճշգրտ և անթերի գործադրութեան,
3. Տնտեսական Խորհրդոյ և Երեւմանց Հոգա-
բարձութեան որոշմանց գործադրութեան,
4. Այցելել թագերը և մատակարարութիւն
ունեցող մարմիններու կեդրոնը, և քննել
ստամարները ու հաշիւները, 5. Առանձին
տեղեկագրիւններով քննութեանց արդիւնքը
իր զիտարկութիւններով հաղորդել Տնտես-
կան Խորհրդոյ:

Երմտական Դիւանի Տեսուչն Ազգ. Պատ-
րիարքարանի Տեսուչներուն ընդհանուր պար-
տականութեանց մասնակցիլ ըլլալով հանդերձ,
անմիջական յարաբերութեան մէջ կը գրա-
նուի Տնտեսական Խորհրդոյ և Երեւմանց Հոգա-
բարձութեան հետ:

Յօդ. 30. — Դիւանապետները կ'ընտրուին զիւանադպիրներէրու կամ Տեսուչներու մէջէն: Դիւանապետները թուով երկու են՝ Ա. վարչական գիւմարի պետ, Բ. Յարարեւրական Դիւանի պետ: Ա. վարչական գիւմարի պետը պէտք է ըլլայ հմուտ հայերէն և ֆրանսերէն լեզուներուն, ծանօթ ազգային անցեալ և ներկայ կեանքին, և միանգամայն փորձառու գիւմարական գործող:

Բ. Յարարեւրական գիւմարի պետը պէտք է ըլլայ օրէնսգէտ և քաջամուտ թուրքերէն և ֆրանսերէն լեզուներու:

Դիւանապետներու ամսաթոշակն է 1750 դահեկան, և ամէն երեք տարի կ'ստանան 250 դրշի յաւելում մը, մինչև որ ընդունին իրենց բարձրագոյն թոշակը՝ որ է 2500 դահեկան:

Յօդ. 31. — Բարաւագործները, արկղակալը, համարակալը, զիւանադպիրները, տեսուչներն ու զիւանապետները կ'ընտրուին Բարաւագործական ժողովոյ որոշմամբ:

Յօդ. 32. — Գործակաւարը նոյնպէս կ'ընտրուի՝ Բարաւագործական ժողովոյ կողմէ: Ամսաթոշակն է 1200 դահեկան, որ ամէն երկու տարին անգամ մը 200 դահեկան յաւելում մը կ'ստանայ, մինչև որ լրանայ 2000 դահեկանի, որ է՝ այս պաշտօնին յատկացեալ բարձրագոյն ամսականը: Երթեւեկի ծախքերը իր վրայ են:

33. — Խորհրդականը նմանապէս կ'ընտրուի Բարաւագործական ժողովոյ կողմէ, և կ'ստանայ 3000 դահեկան ամսաթոշակ, և իրաւունք ունի ամէն 3 տարին անգամ մը 500 դահեկանի յաւելում, մինչև որ ստանայ 4000 դահեկան, որ այս պաշտօնին յատկացեալ բարձրագոյն ամսաթոշակն է, և երթեւեկի ծախքերն իր վրայ են:

Յօդ. 34. — Կրօնական ժողովոյ զիւանադպիրը կ'ընտրուի նոյն ժողովոյ կողմէ՝ արժանաւոր ու կարող և գարեփանքէն վկայեալ վարդապետներու մէջէն, և կ'ընդունի միանուագ 600 դահեկան ամսաթոշակ: Ասոր պաշտօնը կը տեւէ երկու տարի, և յաջորդ նստաշրջանին ևս վերընտրելի չէ:

Յօդ. 35. — Կրօնական ժողովոյ քարտուղարը և փոխանորդարանի մնայուն քահանայ քարտուղարը կ'ընտրուին նոյն ժողովոյ կողմէ՝ արժանաւոր և կարող քահանաներու մէջէն, և կ'ընդունին միանուագ 500 դահեկան: Ասոնց պաշտօնը կը տեւէ երկու տարի և վերընտրելի են:

Յօդ. 36. — Կրօն. ժողովոյ եկեղեցական զիւանադպիրն ու քարտուղարը կը ընտրուին ընդ հսկողութեամբ վարչական զիւանապետին:

Յօդ. 37. — Պատր. Փոխանորդը կ'ընտրուի Ազգ. վարչութեան կողմէն ժողովէն և կը հաստատուի Ս. Պատրիարքին: Փոխանորդը պէտք է ըլլայ ձեռնհաս եկեղեցական մը որ գէթ տասը տարի է ի վեր ձեռնադրուած ըլլայ: Իր պաշտօնավարութիւնը կը տեւէ երկու տարի, և յաջորդ շրջանին վերընտրելի չէ:

Փոխանորդը միանուագ կ'ընդունի 1500 դահեկան ամսաթոշակ:

Բ. Սպասաւորները

Յօդ. 38. — Բարաւագործական կ'ընտրուի բարաւագործներու մէջէն, և կ'ընդունի միանուագ 600 դահեկան ամսաթոշակ:

Յօդ. 38. — Բարաւագործները կ'ընտրուին յարմարագոյն սենեկապաններու մէջէն. կ'ընդունին 400 դահեկան ամսաթոշակ, և երկու տարին անգամ մը 50 դահեկանի յաւելում: Իրենց բարձրագոյն ամսաթոշակն է 500 դահեկան:

Յօդ. 40. — Բարաւագործները, սենեկապանները և դռնապանը կ'ընտրուին Տեսուչական Խորհրդոյ կողմէ, և լաւ անցեալ ու բարի վարույց վկայական ունեցող անձերէ, որոնց տարիքը 25էն պակաս և 35էն աւելի ըլլալու չէ:

Սենեկապանները և դռնապանը կ'ընդունին 400 դահեկան ամսաթոշակ:

Յօդ. 41. — Ս. Պատրիարքի անձնական բարաւագործ կ'ընտրուի իր կողմէն, և բացի սահմանաւոր ամսաթոշակէն, կ'ստանայ 100 դահեկան իրրեւ յաւելումական թոշակ: Պատրիարքի անձնական բարաւագործ ըլլալէ զադրելէ վերջ, կը դադրի նաեւ 100 դահեկանի սոյն յաւելումական ամսաթոշակը:

Յօդ. 42. — Բարաւագործ և սենեկապանը ինչպէս նաեւ դռնապանը՝ բացի իրենց տարեթոշակէն, ամէն տարի Ս. Զատիկի առթիւ կ'ստանան մէկ մէկ ձեռք համադրեալ:

ԳԼՈՒԽ Ը.

Պատրիարքական ընդհանուր պաշտօնէից

Յօդ. 43. — Պատրիարքարանի պաշտօնէւթիւնն առաւօտեան ճիշտ ժամ 9ին, պէտք է գտնուի իր պաշտօնին գլուխը, և երեկոյին մեկնի ժամ 4ու կէսին՝ ձմեռը. (Նոյեմբեր — Մարտ) և 5ու կէսին՝ ամառը. (Ապրիլ — Հոկտեմբեր):

Պատրիարքարանի գործառնութիւնը կը զադրին կէսօրին 12—1, և պաշտօնեայք ազատ են սոյն մէկ ժամուան միջոցին:

Յօդ. 44. — Պատրիարքարանը գոց կը մնայ բացի կէսօրէնէն Ս. Ծննդեան՝ 2 օր, վարդանանց՝ 1 օր, Ս. Զատիկին՝ 3 օր, բոլոր տաղաւարներու երկրորդ օրերը, և Օսմ. Սահմանադրութեան տարեդարձի օրը՝ Յուլի 10:

Յօդ. 45. — Ամէն պաշտօնեայ՝ առանց բացառութեան, առաւօտեան Պատրիարքարան եկած և երեկոյին որոշեալ ժամուան մեկնած առնելով պէտք է ստորագրեն ներկայութեան տուածարը: Առաւօտները ճիշտ ժամը 9ին ներկայութեան տուածարը կը ներկայացուի խորհրդականին՝ որ բացակաները կը նշանակէ:

Յօդ. 46. — Պաշտօնեայ մը չի կրնար առանց բանաւոր պատճառի և խորհրդականին գրաւոր կամ բերանայի հաւանութիւնը չստացած բացակայիլ Պատրիարքարանէն, կամ առաւօտները որոշեալ ժամէն ուշ գալ կամ կանուխ մեկնել:

Խորհրդականը միայն կրնայ արտօնել բացակայութիւնները միշտ տեղեկութիւն տալով Ս. Պատրիարքին:

Յօդ. 47. — Եռամսեայի մը մէջ առանց բանաւոր պատճառի բացակայող կամ առաւօտեան որոշեալ ժամէն ուշ եկող, և երեկոյին կանուխ մեկնող պաշտօնեան 1. անգամուան համար ազգարարութիւն կ'ընդունի, 2. ին ամսականէն մէկ օրական, 3. ին երեք օրական կը զեղչուի, 4. ին մէկ քառօրե ամսականը, 5. ին կէս ամսականը, 6. ին մէկ ամսականը կը զեղչուի, և 7. ին անպայման պաշտօնանկ կ'ըլլայ:

Յօդ. 48. — Խորհրդական բացառիկ աշխատութեանց առթիւ պաշտօնեայք պարտական են ի հարկին մեկնման որոշեալ ժամէն աւելի Պատրիարքարան մնալ և աշխատիլ:

Յօդ. 49. — Պաշտօնեայք իրաւունք ունին տարին տասնեւհինգ օր արձակուրդ ստանալ Ս. Պատրիարքէն, պայմանաւ որ այս թիւը տուութեամբ Պատրիարքարանի ընթացիկ գործառնութիւնը չխանգարուի:

Յօդ. 50. — Եթէ պաշտօնեայ մը երկու տարի արձակուրդ ստացած չէ, իրաւունք ունի 30 օրուան արձակուրդի, և եթէ երեք տարի արձակուրդ չէ ստացած 45 օրուան արձակուրդի իրաւունք կ'ունենայ գործերուն յարմար ժամանակին: Բայց 45 օրէն աւելի արձակուրդ չտրուի երբէք ո՛ր և է պաշտօնէի:

Յօդ. 51. — Արձակուրդի մէջ գտնուող պաշտօնէից ամսաթոշակները ամբողջովին կը վճարուին:

Յօդ. 52. — Եթէ արձակուրդի մէջ գրաւոր պաշտօնէի մը ներկայութիւնը յանկարծ անհրաժեշտ դատեայ Պատրիարքարանի մէջ, կ'ազգարարուի նոյն պաշտօնէին որ դատեայ Պատրիարքարան վերականգնու համար իր աշխատութիւնը, պայմանաւ որ արձակուրդի մնացեալ ժամն ուրիշ անգամ վայելելու իրաւունք ունենայ:

Յօդ. 53. — Արձակուրդի իրաւունք չունեցող պաշտօնեայ մը երբ հարկեցուցիչ պատճառով մը արձակուրդ ուղէ, կրնայ տրուիլ: Ա. գ. պարագային պաշտօնեայն արձակուրդի տեւողութեան միջոցին ամսաթոշակէ կը զրկուի, բացի հիւանդութեան պարագայէն:

Յօդ. 54. — Տասը տարիէ պակաս պաշտօնավարութիւն ունեցող պաշտօնէի մը երկարատեւ հիւանդութեան միջոցին բացակայութեան առաջին երկու ամսաթոշակներն ամբողջովին կը վճարուին. յետագայ երկու ամսուան համար միայն կ'իստովին ամսաթոշակ կը վճարուի: Իսկ չորս ամսէ վերջ ամսաթոշակը կը դադրի:

Յօդ. 55. — Տասը տարիէն աւելի պաշտօնավարութիւն ունեցող պաշտօնէի մը երկարատեւ հիւանդութեան միջոցին, բացակայութեան առաջին երեք ամսաթոշակները ամբողջովին կը վճարուին, յետագայ երեք ամիսներուն եւս միայն կ'իստովին ամսաթոշակ կը վճարուի: Իսկ վեց ամիսէ վերջ այդպիսին պաշտօնէ կը դադրի:

Յօդ. 56. — Զինուորական ծառայութեան կոչուող պաշտօնեան կ'արձակուի իր պաշ-

տօնէն, և զինուորական ծառայութեան գործին չըջանը լրանալէն հաւր բաց պաշտօնի համար ընտրելի կը մնայ, և նախապատուութեան իրաւունք ունի:

Յօդ. 57.— Իր պաշտօնավարութեան մէջ թերացող պաշտօնեան առաջին անգամուան համար Ս. Պատրիարքէն զխտուութիւն կ'ընդունի. երկրորդին Քաղաք. Ժողովէն պարտաւարի կ'առանայ. երրորդին զինքն անուանող ժողովէն կը դատաւարատուի՝ մինչև մէկ ամսականէն զրկուելու. իսկ չորրորդին նոյն ժողովը պաշտօնանկ կ'ընէ պարտադանց պաշտօնեան:

Յօդ. 58.— Պատրիարքարանի ներքին կարգապահութիւնը խանգարելու, Պատրիարքարանի գործառնութեանց մասին պաշտօնի անգաղանապահութեան և կամ զեղծմանց ամբաստանութեան տակ գանուող պաշտօնեան մանրակրկիտ քննութեան կ'ենթարկուի, և եթէ քննութեան արդիւնքն ապացոյցներով աննպատակ լլայ իրեն նկատմամբ, նախորդ յօդուածին մէջ յիշուած պատիժներէն մին կը ստորինուի զինքն անուանող ժողովաց կողմէ:

Յօդ. 59.— Առանց բանաւոր պատճառի պաշտօնեայ մը չկրնար հրաժարեցուցուիլ: Վախճան և հինգ տարին լրացնող պաշտօնեայք անպատճառ կը զազրին պաշտօնավարելէ:

ԳԼՈՒԽ Թ.

Ապանովագրութեան Սկսուի

Յօդ. 60.— Պատրիարքարանի պաշտօն-

եայք առանց բացառութեան պարտաւոր են իրենց կեանքը ապահովագրել տալ խառն (mixte) դրութեամբ, և Պատրիարքարանի միջոցաւ, որ անոնց ամսաթուղթէն հինգ առ հարիւր վար պիտի դնէ այս նպատակին համար: Ասոր վրայ պիտի աւելցուի Պատրիարքարանի Մատուլէն մինչև $2\frac{1}{2}$ տո հարիւր՝ իբր նուէր ամսաթուղթերու վրայ, և ապահովագրութիւնը պիտի կնքուի նոյն հասցիին համապատասխանող դումարի վրայ միայն: Այս մասին պիտի պատրաստուի մատուոր կանոնադիր մը:

ԳԼՈՒԽ Ժ.

Փոխանցման Ծրցան

Յօդ. 61.— Այս կանոնադիրը գործադրութեան գրուելէ հաւր՝ Պատրիարքարանի պաշտօնեայք 19 թղ. յօդուածի համաձայն պիտի ստանան իրենց համար որոշուելիք աստիճանին յատուկ գնէ նուազագոյն թուշակը: Իսկ եթէ արդէն ստացած թուշակին այս աստիճանին առաւելագոյն քանակէն գերազանց է՝ իրենց թուշակին վրայ ու է զեղջ չպիտի կատարուի:

Յօդ. 62.— Ներկայ պաշտօնեաներէն անոնք որ 40 տարին լրացուցած են, չեն կրնար ապահովագրուիլ: Այսու հանդերձ ապահովագրութեան կանոնադիրն պատրաստութեան ժամանակ իրենց պարտական մասնաւոր կարգադրութեան մը առարկայ պիտի լլայ:

ՎԵՐՋ



3519



